Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՀԵՐՄԱՆ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԻ

Ամերիկայի Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետերը մասնակցեցան Առաջնորդարանին մէջ հրաւիրուած հաւաքին, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի, Դեկտեմբեր 10-ին եւ կազմակերպուած էր ի պատիւ Ամերիկայի Ուղղափառ Եկեղեցւոյ առաջնորդ Ամեն. Տ. Հերման Մետրոպոլիտին:

Ներկայ էին Ամերիկայի Ուղղափառ, Յոյն, Ղպտի, Ասորի, Ռուս, Անտիոքի, Ալպանիոյ, Եթովպիական եւ Հայ Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ բարձրաստիճան 33 հոգեւորականներ:

Բացման խօսքը կարդաց թեմական առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան. «Գրեթէ ամիսը անգամ մը հանդիպում կ'ունենանք եւ կամ հաղորդակցութեան մէջ կը մտնենք իրարու հետ: Մենք բոլորս ալ Նոր Աշխարհ եկած ենք Արեւելքէն եւ ամէն ջանք ի գործ դրած՝ որպէսզի մեր կապերը անխախտ մնան մեր արմատներուն հետ՝ յարմարցնելով մեր աւանդութիւնները կեանքի նոր պայմաններուն: Մօտիկ կապեր պահելով միայն իրարու հետ կրնանք միանալ մեր հաւատքին մէջ»:

Մետրոպոլիտ Հերման, որ ծնած եւ հասակ նետած է Փէնսիլվէնիոյ մէջ, մեծ փորձառութիւն ունի հովուական կեանքէն ներս, ան ղեկավարած է Ուղղափառ Ընծայարանը: Անոր առաջին այցելութիւնն էր Առաջնորդարանի համալիրը: Իր խօսքին մէջ Մետրոպոլիտը ըսաւ. «Այսպիսի հանդիպումներու միջոցաւ է որ մեր Եկեղեցին կը յառաջդիմէ: Այս երկրին վրայ մենք իրագործելիք բազմաթիւ գործեր ունինք: Այստեղ է որ ի յայտ պիտի բերենք մեր սէրը Աստուծոյ եւ Անոր հաւատացեալներուն հանդէպ: Մեր պարտականութիւնն է գործել միասնաբար՝ Տիրոջ զաւակները առաջնորդելու համար դէպի երկնային թագաւորութիւն: Ամէն միջոց պէտք է օգտագործենք քրիստոնէական սիրով զօրացնելու մեր Եկեղեցին»:

Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ առաջնորդ Տ. Տիմիթրիոս արքեպիսկոպոս ըսաւ որ միութիւնը յառաջդիմութեան նշան է, եւ ամէն ինչ որ այս նպատակին կը ծառայէ՝ սուրբ է. իրարու հետ աւելի մօտիկ կապեր հաստատելով մենք իրագործած կ'ըլլանք մեր Տիրոջ կամքը:

Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ արքեպիսկոպոս Եփրեմ Քարիմ ըսաւ. «Իրարմէ սորվելիք շատ բաներ ունինք այս Արեւմտեան աշխարհին մէջ: Միջոցները պէտք է ստեղծենք իրարու քով գալու եւ իրարմէ սորվելու»:

Հաւաքին ներկայ եկեղեցականները առիթ ունեցան իրարու հետ գաղափարներ փոխանակելու եւ իրենց տեսակէտները պարզելու:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ